Նարեկ Մալյան

ԶՐՈՅԱԿԱՆ ԿԵՏ

վեպ

2-րդ վերախմբագրված
հրատարակություն

new mag

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 821.19-31 Մալյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Մ 165

Մալյան Նարեկ
Մ 165 Զրոյական կետ: Վեպ / Ն. Մալյան.- 2-րդ վերախմբագրված հրատարակություն.- Եր.: Newmag, 2024.-340 էջ:

Վեպը մարդկության պատմության ընթացքում կրոնական մոլեռանդությամբ ձևավորված մահապարտ ահաբեկչության մասին է: Ահաբեկչությունը չունի ո՛չ ազգային, ո՛չ էլ կրոնական պատկանելություն: Աշխարհի հզորները հաճախ են օգտագործել հավատի ուժը՝ իրենց իշխանությունն ամրապնդելու և ստացած բարիքները բազմապատկելու նպատակով: Գրքում զուգահեռներ են անցկացվում քրիստոնյա և մուսուլման աշխարհների պատմական դեպքերի միջև: Վեպն ավարտվում է մեր օրերում տեղի ունեցած ահաբեկչության պատմությամբ: Գրքի բովանդակության մեջ թաքնված զրոյական կետերը միավորվում են գլխավոր զրոյական կետի շուրջը:

ՀՏԴ 821.19-31 Մալյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-967-24-0
Նարեկ Մալյան «Զրոյական կետ» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

1 Պատարագ 7

2 Ալեքսեյ կայսեր նամակն Ուրբանոս 2-րդին 19

3 Երիտասարդ Սայիդի առաջին քայլերը 31

4 Բու Թահիր Արրանի 41

5 Հավա՞տ, թե՞ սեր 81

6 Լիզի պապիկը և Ալին 93

7 Պրոֆեսոր Մոշեն պատմում է Էխնաթոնի պատմությունը: Կույր հավատ 111

8 Ուրբանոս 2-րդը հետազոտում է հանրային կարծիքը 145

9 Ուրբանոս 2-րդի կոչի ուխտավորները 165

10 Սայիդի փախուստը Ալամուտ 181

11 Ալամուտ 191

12 Հոր և որդու զրույցը 215

13 Ալիի երազը 221

14 Խաչակիր ասպետների նամակներն Ուրբանոս 2-րդ Պապին 231

15 Խաչակիրներն Անտիոքում 245

16 Հաբիբի. Սայիդի առաջին բացահայտումն Ալամուտում 285

17 Ալմուալիմի գլուխը. Սայիդի երկրորդ բացահայտումն Ալամուտում 293

18 Ուրբանոս 2-րդ Պապի գաղտնիքը 315

19 Վերջաբան 321

1

Դատարագ

1095, Կլերմոն

1095 թվականի նոյեմբերյան մի ցուրտ երեկո Պապ Ուրբանոս 2-րդը բոլոր հավատացյալներին հավաքել էր կլերմոնյան Նոտր Դամում պատարագ մատուցելու: Տաճարին մոտեցող բազմաթիվ ձիակառքերից մեկից իջավ հերթական ազնվական ասպետը և, հընթացս ուղղելով թիկնոցը, քայլեց դեպի տաճար: Նրա կառքի բեռնամասից դուրս եկավ մաշված հագուստով մի մարդ ու, գրպանից հանելով ինչ-որ քսուկ, դատարկեց ափի մեջ ու, մոտենալով ձիերից մեկին, սկսեց մերսել ձիու ոտքը: Ձիապան Մարկն էր:

Մարկն աշխատում էր որպես ձիապան: Ուրբանոսի ճառի օրը նա եկել էր Նոտր Դամ իր տիրոջ՝ մի ազնվական ասպետի հետ, որի ձիերը խնամում էր, հետևաբար նա Մարկի գործատուն էր: Ասպետի ձիերից մեկը մի քանի շաբաթ առաջ սայթաքել էր, և նրա ոտքին անհրաժեշտ էր ժամը մեկ դեղ քսել ու մի փոքր մերսել: Վնասվածքն առանձնապես մեծ չէր: Անասնաբույժն ասել էր՝ հոգ չէ, առանձնապես լուրջ վնասվածք չէ, սակայն անհրաժեշտ է որոշ ժամանակ խնամել ձիու ոտքը: Այդ նպատակով ձիու տեր ասպետը վարձել էր Մարկին, որպեսզի ձիու հետևից ամենուր գնա, պարտաճանաչորեն

ու ճիշտ ժամանակին խնամի ձիու ոտքը: Այդպես էլ անում էր: Մարկը ճիշտ ժամանակին կանգնեցնում էր ձիուն, բժշկի ասած հատվածներում ձեռքերով քսում էր դեղն ու մերսում ձիու հետևի աջ ոտքը: Ձիուն ակնհայտ դուր էր գալիս, որովհետև նա հանգիստ մոտ էր թողնում Մարկին, իսկ մերսման ընթացքում գոհունակությամբ փնչացնում էր: Այդ օրը ձիու տեր ասպետը որոշել էր մասնակցել Պապի մատուցած պատարագին: Երկրով մեկ լուրեր էին պտտվում, որ Ուրբանոսն ինչ-որ յուրահատուկ ասելիք ունի այդ օրը: Մոտակա վայրերից կլեմենտյան տաճար էին ժամանել բոլոր նրանք, ովքեր հնարավորություն ունեին այդտեղ հասնելու: Մարկը ձիու ոտքը մերսելուց հետո կանգնել էր եկեղեցու բակում, ձանձրանում էր ու մրսում: Պարապությունից հորանջելով աջուձախ էր նայում ու փորձում գուշակել, թե եկեղեցուն մոտեցած հերթական կառքը որ երկրամասի ազնվականին է պատկանում: Գալիս էին շքեղագույն կառքեր, որոնք զարդարված էին հնաոճ զարդաքանդակներով, դրանք արվեստի գործեր էին, գլուխգործոցներ՝ ոսկեզօծ արձանիկներով, մուգ կարմիր, թանձր թավշե վարագույրներով ու փայլեցրած դեկորատիվ սռնիներով: Նման կառքերը բակում մի քանիսն էին, դրանց շլացնող գեղեցկությունը եկեղեցում տեղի ունենալիք իրադարձությանն առանձնահատուկ կարևորություն էր հաղորդում: Այդ կառքերի վրա վարպետը տարիներով է աշխատել: Այդ կառքերն ունեցողներն ամեն դատարկ բանի համար չեն հավաքվում մի տեղում: Մարկը պատկերացրեց, թե այդպիսի կառք ունենալու դեպքում ինչքան մեծ կլիներ ցանկությունն ամեն տեղ այցելելու հենց միայն այդ ոսկեզօծ հրաշքը ցուցադրելու նպատակով: Եկեղեցու շրջակայքում հավաքված

կառքերի հիմնական մասն առանձնապես թանկարժեք չէր, բայց ամեն դեպքում դրանք նաև հասանելի չէին սովորական մարդկանց: Դրանցով եկեղեցի էր ժամանել շրջակա տարածքների ազնվականությունը: Մարկը գլխի ընկավ, որ եթե բակում 100 մղոն շառավիղով հավաքվել են ամենաթանկարժեք էկիպաժները, տաճարի ներսում հաստատ չափազանց կարևոր իրադարձություն է տեղի ունենալու: Եկեղեցու բակ էին ժամանում շրջակա բնակավայրերի բնակիչներն ու աստիճանաբար տեղ չէր մնում նույնիսկ կանգնելու համար:

Մարկը հիշեց, որ տուն գնալուց պետք է մտնի հացթուխի մոտ: Նրան այդ հեռանկարն այնքան էլ դուր չեկավ, քանի որ նաև հիշեց, որ հացթուխը վերջին այցելության ժամանակ ակնարկել էր վերադարձնել նախկին պարտքերը, որոնք կուտակվել էին հացթուխի ու նպարավաճառի մատյաններում: Մարկն ինչ-որ բան կվաճառեր պարտքերը մարելու համար, սակայն առանձնապես շատ իրեր չուներ: Վաշխառուն գրավադրել էր Մարկի՝ առանց այն էլ աղքատիկ կահկարասին, ու հիմա նա չէր պատկերացնում՝ ձիու ոտքեր մերսելով, ինչպես է պահպանելու իր ֆինանսական կայունության վերջին նշույլները:

Եկեղեցում այնքան մեծ բազմություն էր հավաքվել, այնքան խիտ էր բազմությունը, որ կարծես առանձին մարդիկ չլինեին, այլ մի ամբողջական մարմին՝ հազարավոր ձեռքերով ու ոտքերով: Գործնականում անհնար էր ներս խցկվել: Մարկը գլուխը մտցրեց եկեղեցու դռնից ներս: Միանգամից բազմության արտաշնչած տաք գոլորշին տոթով ու բազմաթիվ տհաճ հոտերով հարվածեց դեմքին: Եկեղեցում միանգամայն ուրիշ կլիմա էր:

Չնայած բազմերանգ ու հիմնականում ցածրախավ բազմությանը՝ ներսում տիրեց քար լռություն, երբ եկեղեցու խորանում հայտնվեց Ուրբանոս 2-րդ Պապը: Նա հանդիսավոր տեղավորվեց իր գահավորակին ու գլխով նշան արեց սկսելու սուրբ պատարագը: Կարդինալներն ու քահանաները սկսեցին օրհնության կարգը, եկեղեցու վերևի հատվածից նվագեց երգեհոնը:

— In nomine Patris et Filii et Spiritus sancti*,– սկսեց աղոթքը Բոլոնիայի եպիսկոպոսը:

Եկեղեցու ներսում գտնվողները խաչակնքեցին, որքան կարող էր թույլ տալ նեղվածքը: Խաչակնքման փոխարեն, սակայն, ստացվեց անկանոն հրմշտոց, որը չվերածվեց ծեծկըռտուքի միայն տաճարի սակրալ մթնոլորտի ու հավաքվածների աստվածավախ լինելու շնորհիվ: Սովորաբար մարդկային այս կատեգորիան սիրում է զանգվածային միջոցառումների ժամանակ հրահրված տուրուդմփոցները: Գյուղական տոնավաճառներին, քաղաքային հրապարակներում մահապատիժներին հասարակ ամբոխը հավաքվում է զվարճանալու, իսկ զվարճանալու ամենաուրախ տարբերակը գինու տակառները դատարկելուց հետո առանց պատճառի միմյանց մռութներ ջարդելն է, հետո, արյունլվիկ տուն հասնելով, համագյուղացիների հետ ոգևորված քննարկելը դատարկ պատճառով առաջացած ծեծուջարդն ու չափազանցնելով նկարագրել սեփական հարվածների ուժը:

Նույն մարդկանց պահվածքը միանգամայն այլ է եկեղեցու ներսում կամ կրոնական ծեսերի ժամանակ: Հասարակ

* Հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու (լատ.): (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

մարդիկ չափազանց աստվածավախ են Աստծո առաջ նման վարք դրսևորելու համար: Բարեպաշտ հավատացյալի տպավորություն թողնելու համար նրանք պատրաստ են միմյանց ներել անգամ կողքին կանգնածի արմունկով հրմշտելը կամ հետևի աղոթողի բերանի վատ հոտը: Ցանկացած պանդոկում այդ ամենն արյունահեղության լավագույն առիթ կարող էր լինել, սակայն ոչ եկեղեցում: Եկեղեցին Աստծո տունն է, այստեղ մարդիկ իրենց հյուրի պես են պահում՝ գործի դնելով քաղաքավարության կանոնների իմացության իրենց ամբողջ պաշարը:

Մարկը փորձեց ամբողջ մարմնով խցկվել տաճար, բայց ոչ թե կրոնական դրդապատճառներով, այլ ստիպված, քանի որ դրսում արդեն լրիվ մութ էր ու բավականաչափ ցուրտ: Նա ցուրտը տանել չէր կարողանում և այդ պահին պատրաստ էր նույնիսկ գետնի տակն անցնել ու մտնել դժոխքի ամենաթեժ հատվածը, միայն թե մի փոքր տաքանար:

Եկեղեցու ներսում հաճելի էին միայն երգեհոնի միալար ու ծորացող հնչյունները, մնացածն ամեն ինչ արտահայտում էր միայն տառապանք ու տանջանք, ինչի միջով անցել է Աստծո միածին որդին քրիստոնեությունը հիմնադրելիս:

Եպիսկոպոսները կիսաշրջանով շրջապատել էին Պապին և անթարթ նայում էին սուրբ խորանին, որտեղ տեղի էին ունենում պատարագի հիմնական գործողությունները: Պատարագիչ վարդապետն աղոթքներն էր ուղղում առ Աստված՝ ամեն քառատողից հետո խաղաղություն աղաչելով: Երգեհոնն ու պատարագիչ վարդապետն իրար կատարելապես փոխլրացնում էին: Մարկը բնականաբար ոչինչ չէր հասկանում այդ ամենից նախ այն պատճառով, որ լատիներեն

ընդհանրապես չգիտեր, երկրորդ՝ նա կանգնած էր վերջում, որտեղից համարյա ոչինչ չէր երևում: Կարելի է ասել՝ նա եզրափակում էր հավատացյալ ամբոխին՝ գտնվելով ամենաանհարմար կետում: Նա եկեղեցում կանգնած վերջին մարդն էր:

Պատարագն ավարտվում էր, և պատարագիչ վարդապետն արդեն խռպոտած ձայնով էր խաղաղության կոչ անում: Երբ հնչեցին երգեհոնի վերջին հնչյունները, Ուրբանոս 2-րդը կանգնեց ու հանդարտ քայլերով բարձրացավ խորան: Ժողովուրդը հուզմունքից ալեկոծվեց ու սկսեց գոռալ Dieu le veut!: Պատարագի ավարտին Պապը ձեռքով նշան արեց ու ցանկացավ սկսել քարոզը, սակայն որևէ կերպ չէր ստացվում հանդարտեցնել մարդկանց ու վերջապես անցնել քարոզին: Հավաքված ամբոխն ընդհատում էր պապի խոսքը՝ գոռալով Dieu le veut!*:

Մարկը լսել էր, որ Պապի մունետիկները նախապես հայտարարել էին այն մասին, որ Ուրբանոս 2-րդը պատարագից հետո, քարոզի ընթացքում, չափազանց կարևոր հայտարարություն է անելու: Հավաքված ժողովուրդը չէր կարող նույնիսկ գլխի ընկնել, թե ինչի մասին է խոսելու Պապը: Ոմանք, իրենց ամեն ինչից տեղյակ մարդու տեղ դնելով, կողքիններին տեղեկացնում էին, որ Պապը պատրաստվում է եկեղեցու բեմից առ հակապապ ուղղել հերթական անաֆեման ու նզովքի չափաբաժինը, ոմանք պնդում էին, որ պապական գանձարանը դատարկվելու եզրին է, ուստի Ուրբանոսը որոշել է ինչ-որ հնարով լցնել այն, մեկ ուրիշները վստահաբար ասում էին, որ Պապի և հակապապի միջև լարվածությունն այնքան է սրվել, որ Ուրբանոսը որոշել է զորքով գրոհել Հռո-

* Աստծո կամոք (ֆր.):

Սուրբ հող տանող ճանապարհը ներկվել էր արյամբ: Քրիստոնյաները զրկված են հոգևոր պարտքը կատարելու հնարավորությունից: Սկզբում կարծում էի, թե այդ հանցագործություններն իրականացվում են կողոպուտի նպատակով, սակայն, դրանց շարունակականությունն ու իրականացման առանձնահատուկ դաժանություններն իմանալով, հասկացա, որ սա ուղղակի հաշվեհարդար է հավատացյալների նկատմամբ: Ոտնձգություն է հավատի, ոչ թե առանձին մարդու կամ նրա ունեցվածքի նկատմամբ:

Ամբոխը վրդովվեց, գոռալ:

— Կիսում եմ ձեր վրդովմունքը: Ես, որպես քրիստոնյա եկեղեցու հովիվ, հարյուրապատիկ ավելի ծանր եմ տանում յուրաքանչյուր քրիստոնյայի ցավը և վիշտը,– շարունակեց խոսքն Ուրբանոսը,– արդեն հաստատված փաստ է, որ մեր քրիստոնյա եղբայրները գտնվում են վտանգի մեջ: Սարացինները զավթել են Սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, Տիրոջ գերեզմանը և իրենց պիղծ ոտքերով տրորում են Սուրբ հողը: Նրանք քայլում են Սուրբ հողում ինչպես տանտերեր ու հնարավոր ամեն կերպ ճնշում են քրիստոնյա եղբայրներին և քույրերին: Արյունը և արտասուքը ոռոգում են դաշտերն ու անապատները: Հավատացյալներն անելանելիությունից ստիպված լքում են իրենց պապենական տները և ընտանիքներով փախչում Սուրբ հողից: Սուրբ հողն այժմ դարձել է Աստծո անեծքի ու տանջանքների հող: Ամեն օր ստանում եմ բազմաթիվ նամակներ, որոնցում իմ հավատացյալ հոտն օգնություն է աղերսում որևէ կերպ գոյատևելու համար: Եղբայրնե՛ր, այլևս անկարելի է համբերել: Համբերության ամեն օրը, ամեն ժամը հավատացյալներից մեկի կյանքն են արժենում:

Ուրբանոսը գլուխը բարձրացրեց ու, նայելով եկեղեցու առաստաղի գունազարդ նախշերին, գոչեց.

— Արդ, ժամն է պաշտպանելու մեր եղբայրներին ու քույրերին: Ժամն է արդար հատուցման, ժամն է Աստծո արդարություն հաստատելու Սուրբ հողում և ամբողջ աշխարհում: Ի զեն, իմ սիրելի հավատացյալ հոտ:

— Dieu le veut!,– ի պատասխան գոռաց ամբոխը: Ալիք-ալիք տարածվում էր բազմության ձայնը: Մարդիկ վրդովված էին, բարկացած: Նրանք համամիտ էին Ուրբանոս 2-րդի հետ, որ այլևս անկարելի է հանդուրժել նման վերաբերմունք քրիստոնյաների նկատմամբ: Ամբոխը դեռ երկար չէր հանգստանում, մինչև Ուրբանոսը ձեռքով հանդարտության նշան արեց:

— Ամեն գիշեր երազներում ինձ այցելում են նահատակված քրիստոնյաների հոգիները: Նրանք արդար հատուցում են պահանջում,– շարունակեց խոսքը Ուրբանոսը,– և ես, որպես քրիստոնյա հոտի հովիվ, իմ աղոթքներում ամեն օր հիշում եմ նրանց, բայց իրավիճակը, ցավոք, այնպիսին է, որ պետք է անել ավելին, քան աղոթքն է: Քրիստոնեական հեզությունը վերաբերում է միայն քրիստոնյաներին, իսկ անհավատների հետ խոսելու համար միայն մեկ լեզու կա՝ զենք ու անհանդուրժողականություն նրանց նկատմամբ: Չկա լավ անհավատ: Բոլոր սարացինները հավերժ Աստծո անեծքի տակ են, ու նրանց երկրային պատիժը մեր ձեռքերում է:

Ուրբանոսը լռեց, մի փոքր դադար վերցրեց ու շարունակեց.

— Այս պահից սկսած, բոլոր հավատացյալները, որոնք կմեկնեն ուխտագնացության, բացի Պապի օրհնությունից՝ իրենց հետ կվերցնեն նաև զենք՝ ճանապարհի փորձություններին դիմագրավելու համար, իսկ Սուրբ հող ուխտագնացության

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark